

հաշուարկի ենթարկենք՝ ոչ միայն անհատին առաւելութիւններն ու թերութիւնները, այլ բոլոր անոնց, որոնք տուեալ վարմունքի հետեւանքներուն հետ որեւէ առնչութիւն ունին կամ կրնան ունենալ: Այլ խօսքով, վարմունքի մը ընտրութիւնը պէտք է կայանայ նկատի ունենալով ընդհանրականացման սկզբունքը, ուր կը շեշտուին արդարութիւնը եւ օգուտի բաշխման հաւասարութիւնը: Այստեղ սակայն կը յառաջանայ նոր ու վիճելի հարց մը, թէ արդեօք կարելի՞ է իրականացնել՝ վերոյիշեալ արդարութիւնն ու հաւասարութիւնը եւ ի՞նչ միջոցներով...:

Դասական օգտապաշտութեան մէջ, ընդհանուր օգուտը միշտ կազմուած կ'ըլլայ անհատներու օգուտին գումարով, առանց նկատի առնելու օգուտի բաշխման հաւասարութիւնը: Այս իմաստով կարելի է պատկերացնել, որ կարգ մը անհատներ կրնան նաեւ վնաս կրել, ընդհանուր շահի սիրոյն: Գործ-նական օրինակով ասիկա կը նշանակէ, որ եթէ ես ընտրել կարենամ անմեղ անհատ մը սպանել, բազմաթիւ այլ անհատներու կեանքը փրկելու համար, այդ սպանութիւնը պէտք է կատարեմ: Այլ խօսքով, օգտապաշտութեան տեսանկիւնէն դիտուած կարելի է անմեղ անհատ մը զոհել (վնասելով մարդու հիմնական իրաւունքները), բազմաթիւ այլ անհատներ փրկելու համար:

Ուրեմն օգտապաշտութեան հաշուարկի ընդհանրականացման պարագային, պէտք է նկատի առնուին՝ մէկ կողմէ, վարմունքը կատարող անհատի առաւելութիւններն (շահերը) ու թերութիւնները (վնասները), որու արդիւնքը շատ հաւանաբար դրական պիտի ըլլայ. իսկ միւս կողմէ, վարմունքի հետ առնչութիւն ունեցող այլ անհատներու առաւելութիւններն (շահերը) ու թերութիւնները (վնասները), որու արդիւնքը հաւանաբար բացասական ըլլայ:

Բենթամի հաշուարկը («բարոյական թուաբանութիւն») սակայն, գիտական որեւէ հիմք չունենալով, կարելի չէ որպէս չափանիշ օգտագործել՝ թէ՛ անհատի (ենթակայի) եւ թէ միջենթակայական (Intersubjective) առաւելութիւններու ու թերութիւններու պարագային: Այլ խօսքով, բարոյագիտութեան ուղորտին մէջ, կարելի չէ թիւերով չափել մէկուն երջանկութիւնը կամ միւսին տառապանքը եւ թուաբանական գործողութիւններով որեւէ յստակ արդիւնքի մը հասնիլ: Ասոր կողքին պէտք է նկատի ունենանք, որ անհատներու երջանկութիւնը ընդհանրապէս անհամաչափելի է, որու պատճառով օգտապաշտութեան հաշուարկ մը թէ՛ տեսականօրէն եւ թէ գործնականօրէն անկարելի պիտի ըլլայ:

Այսուհանդերձ, մեր առօրեայ կենցաղային վարմունքներու մէջ, մենք ընդհանրապէս կամ յաճախ նկատի կ'առնենք ու կը համեմատենք բոլոր առաւելութիւններն ու թերութիւնները, թէ՛ մեր եւ թէ այլ անհատներու նկատմամբ: Օրինակ՝ այլոց հանդէպ ակնածանքը (զանոնք նկատի առնելը) կամ անոնցմէ անարդարօրէն բան մը պահանջելու յանդգնութիւնը կամ անոնց վնաս պատճառելը եւայլն ... հասկացութիւններ են, որոնք կը հաստատեն վերոյիշեալ գաղափարը: Իսկ ուրիշներու ցաւն ու տառապանքը չափելու համար, մենք յաճախ մենքզմեզ կը տեղադրենք այդ անհատներու տեղը եւ անոնց հանդէպ համակրանք կամ կարեկցութիւն ցոյց կու տանք: